ցուցնել բոլոր այս տեսարաններն ու անոնց տակ թաքնված ցավերը, այնքան հարազատ թերևս, որքան հարազատ են իր հայրենաբաղձ շինականի արևոտ շեշտերն ու վճիտ հեծեծմունքը»:

Գոլանճյանի ճիշտ եզրակացություններից մեկն էլ այն է, որ նա «Հեթանոս երգերի» տարբեր բաժինների թեմատիկ բազմազանության մեջ տեսնում է գաղափարական ու գեղագիտական սերտ միասնություն: Պատմական ու դիցաբանական դրվագներում, թե «զուտ զգայարանական» պատկերներում, բնության տեսարաններում, թե բանվորական աշխարհի «իրապաշտ» արտացոլումներում,– ամենուր բանախոսը զգում է բանաստեղծի հոգին փոթորկող «ցավն հաճույքին ու հաճույքները ցավին», «ընդհանուր գաղափարներուն բանաստեղծական ճշմարտի» կարոտը, «լույսի տենչը», «ընդոծին իղձը ազատության». «մեկ խոսքով, ապողոնյան ուժին փառաբանությունը, սայրասուր կամքին ու գեղեցկին պաշտամունքը, գեղեցկին, իբրև ամենեն խորունկ արձագանգին՝ կյանքին անիշխանական անբավության մեջ, գեղեցկին, որ ուրիշ բան չէ հեթանոս երգչին համար, բայց եթե կյանքին այդ անբավ պատկերին պատճառն իսկ, ստեղծիչն իսկ»: Վարուժանի բանաստեղծական աշխարհը, ինչպես եզրակացնում է բանախոսը, վերջիվերջո գոյանում է բնապաշտության, կենսապաշտության և գեղեցկապաշտության համադրությունից:

Էդ. Գոլանճյանը, տարբեր առիթներով նաև մյուս բանախոսները, հաճախ ակնարկում են Վարուժանի «իրապաշտության» մասին: Այս հարցը բազմաթիվ տարակարծությունների առիթ է տվել նաև հետագայում: Եվ հետաքրքիրն այն է, որ ինչպես ցույց է տալիս ասուլիսի նյութերի ուսումնասիրությունը, առաջին քննադատները միանգամայն ճիշտ են հասկացել բանաստեղծի իրապաշտության իմաստն ու բովանդակությունը: Ասուլիսի ընթացքում բանախոսները նույնիսկ հարկ էլ չեն համարում լրացուցիչ բացատրություն տալ այն մասին, թե ինչ նկատի ունեն իրենք՝ խոսելով «Ցեղին սիրտի» կամ «Հեթանոս երգերի» իրապաշտության մասին. նրանց մտքով չէր էլ անցնում, թե Վարուժանի «իրապաշտությունը» կարող է հանկարծ ընկալվել իբրև ստեղծագործական մեթոդ: Ինքնըստինքյան հասկանալի է, որ բանախոսներն իրապաշտությունն ընդունում էին միայն որպես Վարուժանի ոճի, նույնիսկ ավելի նեղ՝ գրական հնարանքի հատկանիշ, նկատի ունեին նրա առարկայական մտածողությունը,